ՄԵՏԱՔՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Գ. Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսին Արևելյան Հայաստանում մետաքսի արտադրության պատմությունն ուսումնասիրելիս, որոշակի երևան են գալիս նրա զարգացման փուլերը՝ սկսած տնայնագործականից, վերջացրած գործարանային արտադրությամբ։

Մետաքսի տնայնագործական արտադրությունը հիմնված էր շերամապահական գյուղատնտեսական զբաղմունքի վրա և նրա հետ սերտ կապի մեջ էր։ Եթե որևէ շրջանում զարգացած էր շերամապահությունը, ապա այնտեղ բնակչությունը զբաղվում էր մետաքսաթելի և երբեմն էլ մետաքսե գործվածքների արտադրությամբ։ Այդ զբաղմունքի մեջ դեռևս գոյություն չուներ աշխատանքի լուրջ բաժանում։ Նույն անձնավորությունը միաժամանակ զբաղվում էր և՛ շերամապահությամբ, և՛ մետաքսաթելի, և երբեմն էլ մետաքսե գործվածքների արտադրությամբ։ Նման պայմաններում «դժվար է որոշել գյուղատնտեսական և տնայնագործական արտադրությունների տարբերությունները։ Բոժոժի ստացումը, որով զբաղվում են գյուղացիները- դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ, վերագրել այդ գյուղատնտեսական արտադրությանը, թե՞ տնայնագործական զբաղմունքներին...»[1]։

Անդրկովկասը շերամապահությամբ և մետաքսագործությամբ հայտնի էր դեռ վաղ անցյալում։ Այդ արտադրությամբ աչքի էին ընկնում երկրամասի հատկապես արևելյան շրջանները։

XIX դ. սկզբում մետաքսագործության վիճակն Անդրկովկասում անմխիթար էր։ Անդրկովկասը Ռուսաստանին միանալու ժամանակաշրջանում, շերամի որդի զանազան հիվանդությունների հետևանքով, այդ արտադրությունը զգալիորեն կրճատվել էր։ Ի. Շոպենը խոսելով երբեմնի Հայկական մարզի մետաքսագործության մասին, գրում է. «Հայաստանի բնակլիմայական պայմանները նպաստավոր են մետաքսագործության համար, սակայն, ցավոք, արտադրանքը շատ քիչ է ու պակասավոր։ Երևանում տարեկան արտադրվում էր լոկ 10 ֆունտ[2] մետաքս։ Նախիջևանի շրջանում մետաքսի արտադրանքը հազիվ հասնում էր 4½ փթի։ Համեմատաբար ավելի շատ արտադրանք էր տալիս Օրդուբադն իր շրջակա գյուղերով՝ 73½ բաթման[3], այսինքն՝ 70 փութ, 20 ֆունտ։ Եթե բոլորը գումարենք, կստացվի 75 փութ, 10 ֆունտ։ Մետաքսի

---

[1] К. Хатисов, Кустарные промыслы Закавказского края, Тифлис, 1891, стр. 3.

[2] Ֆունտը կամ գրվանքան կշռաչափ է, որը հավասար է 409,5 գրամի։

[3] Բաթմանը նույնպես կշռաչափ է, որը հավասար է 32 ֆունտի։

մեկ փութը արժեր 100 ռուբլի արծաթ։ Ուրեմն, ամբողջ հայկական մարզը մետաքսագործությունից ստանում էր տարեկան 7,525 ռուբլի արծաթ»[4]։

Մետաքսի արտադրությանը զարկ տալու համար ցարական կառավարությունը XIX դ. 30—40-ական թվականներին ձեռնարկեց մի շարք միջոցառումներ. ստեղծվեց մետաքսագործական ընկերություն, որը պետք է հոգար արտադրության այդ ճյուղի կարիքները և ամեն կերպ նպաստեր նրա զարգացմանը։ Բացի դրանից, համեմատաբար արտոնյալ վիճակ ստեղծվեց շերամապահությամբ զբաղվողների համար՝ նրանք ազատվեցին դրա համար գանձվելիք հարկերից[5]։

Ի տարբերություն գործվածքային արտադրության մյուս ճյուղերի, ռուսական մետաքսագործական մանուֆակտուրաները բուն Ռուսաստանում չունեին հումքի սեփական բազաներ։ Այդ իսկ պատճառով Անդրկովկասի վրա մեծ ուշադրություն էր դարձվում։ 1830 թ. ցարական կառավարությունը հատուկ օրենք հրապարակեց, ըստ որի պետք է հոգ տարվեր երկրամասում թթենու այգիների ընդարձակման ու մշակման համար[6]։ Անդրկովկաս էին հրավիրվում օտարերկրյա մասնագետներ, որոնք պետք է ընդարձակեին շերամապահությունը և արտադրական բարձր մակարդակի հասցնեին մետաքսաթելի ստացումը։ Այդպիսիներից էր առաջին կարգի վաճառական Կաստելլան, որը 1830-ական թվականներին ռուսական կառավարությունից ստանալով արտոնություններ և դրամական միջոցներ, Թիֆլիսում պետք է կառուցեր մետաքսի մշակման և մետաքսաթելի ստացման ֆաբրիկա[7]։ Սակայն այդ գործը Կաստելլայի մահով ընդհատվեց և չիրագործվեց։ Այս և նման միջոցառումներով ցարական կառավարությունը ձգտում էր երկրի մետաքսագործական ձեռնարկություններն ապահովել սեփական հումքով, որպեսզի ստիպված չլիներ այն թանկ գներով ներմուծել արտասահմանից։

Անդրկովկասից Ռուսաստան արտահանվող մետաքսահումքը տարեցտարի ավելանում էր, որի հիմքի վրա Ռուսաստանի մետաքսե գործվածքների արդյունաբերությունը շարունակում էր աճել։ 1838 թ. Մոսկվայի նահանգում վերամշակվել է 38.000 փութ բոժոժ և մետաքսաթել, ըստ որում՝ հումքի 8.200 փութը եվրոպական էր, 8000-ը՝ չինական, իսկ 21.800-ը՝ կովկասյան[8]։ Վերջինիս մեջ որոշակի բաժին ուներ նաև Արևելյան Հայաստանը։

Շերամապահությամբ ու մետաքսագործությամբ աչքի էին ընկնում Երևանի, Նախիջևանի, Շարուրի և Էջմիածնի գավառները։ Նման աշխատանքով սովորաբար զբաղվում էր գյուղական ընտանիքների աշխատող ձեռքերի մի մասը և այն էլ տարվա կարճ ժամանակում։ XIX դ. երկրորդ կեսին այն ուներ օժանդակ՝ տնայնագործական արտադրության բնույթ։ Այսպես, «Օժանդակ և տարածված զբաղմունքը է այստեղ (Զանգեզուրի Շվանիձոր գյուղում— Դ. Ա.) շերամապահությունը, սրանով առանց բացառության ամենքն են պա-

[4] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, стр. 74.

[5] «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. IV, Тифлис, 1888, стр. 174.

[6] «Обозрение Российских владений за Кавказом», т. I, СПб., 1836, стр. 50.

[7] «Акты, собранные Кавказскою археографическою комиссиею», Тифлис, 1878, т. VII, стр. 3.

[8] Г. Исаев, Роль текстильной промышленности в генезисе и развитии капитализма в России 1760—1860 гг., Л., 1970, стр. 150.

բապում, տարեկան 12 ֆունտից ավելի սերմ է գործադրվում, որը մի զգալի բանակություն է 152 տուն ունեցող գյուղի համար։ Այս գործը բացառապես կանանց ձեռքին է»[9]։

Տեղական մետաքսից տնայնագործ արհեստավորները պատրաստում էին եղրակարերի համար հատուկ մետաքսաթել, մետաքսե գործվածքներ, տարբեր տեսակի գլխաշորեր, ծածկոցներ և այլն։ Մետաքսագործ արհեստավորները տարբեր տեսակի կտորների՝ մետաքսի, թավշի վրա մետաքսաթելով ձեռագործում էին զանազան նախշեր և ապա դրանք շրջափակում արծաթյա և ոսկյա թելերի եղրակարերով, ուլունքներով և մարգարիտներով[10]։ Շատ տարածված էր մետաքսաթել ասեղնագործությունը, որը կրում էր զուտ տնայնագործական բնույթ։ Կային նաև ասեղնագործական արհեստանոցներ, որոնք ունեին մանուֆակտուրային արտադրության բնույթ. այդպիսիք առկա էին Սլիզավետպոլում, Շուշիում, Նախիջևանում և Անդրկովկասի հայաբնակ այլ վայրերում։

Մետաքսյա գործվածքների արտադրությունն Արևելյան Հայաստանում շատ սահմանափակ էր։ Շուշիում պատրաստում էին «ալիշա» կոչվող մետաքսե գործվածք, որն օգտագործվում էր կանացի սպիտակեղեն կտրելու համար։ Երբեմն այն ներկում էին տորոնի և որդան կարմիրի խառնուրդով և ստանում ներդաշնակ գույնի գործվածք։

1902 թ. մետաքսե գործվածքների մանուֆակտուրային արտադրության փորձ կատարեց օրդուբադցի տնայնագործ և միևնույն ժամանակ վաճառականությամբ զբաղվող Հաջի Մահմեդ Կուլի Միրզաբաբաևը։ Նա բացեց 8 դազգահով արհեստանոց և Պարսկաստանից հրավիրեց մետաքսագործ ջուլհակներ, որոնք օրական գործում էին մոտավորապես 50 արշին մետաքսյա գործվածք։ Դա հիմք տվեց կարծելու, որ «ժամանակի ընթացքում մետաքսագործության այս ճյուղը լայն տարածում կունենա Նախիջևանի գավառում և մետաքսի նշանակալից մասը կմշակվի տեղում, որը և խթան կհանդիսանա երկրի մետաքսագործության զարգացման համար»[11]։ Չնայած այս ոգևորությանը և հատ ու կենտ փորձերին, մետաքսե գործվածքների արտադրությունը չընդարձակվեց և հեռու էր ընդհանուր բնույթ կրելուց, որովհետև դրա համար չկային նյութական և տեխնիկական համապատասխան պայմաններ։

Երևանի նահանգում, XIX դ. կեսին, մետաքսի արտադրությունը չնչին էր. 1850 թ. ընդհանուր արդյունքը կազմում էր ընդամենը 80 փութ[12]։ Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ պարբերաբար կրկնվող հիվանդություններից փչանում էր բոժոժի 80%-ից ավելին։

1856—1862 թթ. արևմտաեվրոպական երկրներում շերամի որդի հիվանդությունների պատճառով դադարեց մետաքսաթելի արտահանումը ռուսական շուկա։ Այդ հանգամանքը մեծացրեց անդրկովկասյան մետաքսի պահանջարկը, որի հետևանքով բարձրացան տեղական հումքի և մետաքսաթելի գները։ Օրդուբադում և նրա շրջակայքում 1860-ական թվականներին մետաքսի հումքի տարեկան արտադրանքը սկսեց աճել, հասնելով 10.000—12.000 փթի. յու-

---

9 «Մուրճ», 1900, № 3, էջ 345։

10 А. С. Пиралов, Краткий очерк кустарных промыслов Закавказья, СПб., 1913, стр. 14.

11 «Памятная книжка на 1904 г. Эриванской губернии», ч. III, Эривань, 1904, стр. 24.

12 «Кавказский календарь на 1851 г.», Тифлис, 1850, стр. 14.

բաքանչյուր շերամապահի տարեկան մաքուր եկամուտը կազմում էր 180—240 ռ. արծաթ[13]։ Այստեղ ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում էր այգեգործությամբ և մրգերի վաճառքից ստանում շոշափելի եկամուտներ։ Սակայն շերամապահությունից և մետաքսագործությունից ստացված եկամուտները գերազանցում էին։ Այսպես, օրինակ, 1857 թ. մրգերի վաճառքից ստացված ընդհանուր եկամուտը հավասար էր 36.000 ռ., իսկ մետաքսի վաճառքից ստացվածինը՝ 53.000[14], որը 1958 թ. հասավ 63.000 ռ.[15]։ Շերամապահ-մետաքսագործի մաքուր եկամուտը բարձր էր, որովհետև անմշակ բոժոժի ստացումը կապված չէր դրամական ծախսերի հետ։ Նոր սերմ հազվադեպ էր գնվում, քանի որ այն շերամապահները, որոնք այս կամ այն պատճառով թողնում էին այդ զբաղմունքը, իրենց ունեցած սերմն անվճար տալիս էին հարևան շերամապահներին։ Հակառակ դեպքում՝ դրա համար մեծ գումար չէր պահանջվում։ Արտադրողների մաքուր եկամուտը բավականաչափ բարձր կլիներ, եթե նրանք չկողոպտվեին միջնորդ առևտրականների կողմից, որոնց գործունեությունը գնալով տարածվում էր ու խորանում։ Բանն այն է, որ ստացված մետաքսի հումքի շատ քիչ մասն էր օգտագործվում տեղի տնայնագործների կողմից։ Նրա մեծ մասն արտահանվում էր արտաքին շուկաները, որը կատարվում էր միջնորդ վաճառականների միջոցով։ Նրանք մինչև բոժոժի ստացումը պարտքերի մեջ խճճում էին փողի կարիք ունեցող տնայնագործ-շերամապահներին և նրանցից էժան գներով կորզում բոժոժը կամ մետաքսաթելը։ Օրգուբադում և նրա շրջակա գյուղերում ստացված հումքը գընվում էր ագուլիսցի վաճառականների կողմից, որոնք այն վերավաճառում էին ռուսական և արտասահմանյան մետաքսագործ ֆաբրիկատերերին[16]։

Բացի դրանից, միջնորդ առևտրականները վաշխառուական այլ ճանապարհներով (խաբել, թերակշռել և այլն)[17] իրենց էին ենթարկում տնայնագործ մետաքսագործներին, որի հետևանքով վերջիններս կախման մեջ էին ընկնում նրանցից և դառնում վարձու բանվորներ։ Մ. Կուչաևը տագնապով գրում է. «Վաշխառությունը գյուղական բնակչության մեջ կրում է այնպիսի մեծ չափեր, վեր է ածվել այնպիսի պնդերես, անամոթ ձևերի և ժողովրդի կյանքի վրա այնպիսի ճնշիչ ազդեցություն ունի, որ մեծ սպառնալիք է գյուղացիության գոյությանը»[18]։

1870-ական թվականներին մետաքսի արտադրության վերելքը շերամի որդի զանազան հիվանդությունների պատճառով խափանվեց։ Եթե 1862 թ. Երևանի նահանգում արտադրվել էր 20.000 փութ մետաքսի հումք և թել, ապա 1870 թ. 7.075 փութ[19]։ Տեղի շերամապահ-մետաքսագործները մետաքսի արտադրությանը զարկ տալու նպատակով տեղական հիվանդոտ սերմերի փոխարեն սկսեցին աճեցնել ճապոնական, Բուխարայի, խորասանյան և այլ սերմատեսակներ, որոնցից ամենաարդյունավետը եղավ ճապոնականը։ 1880-

---

13 «Кавказский календарь на 1868 г.», Тифлис, 1867, стр. 410.

14 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1268, ց. 9, գ. 132, թ. 131։

15 Նույն տեղում, ց. 19, գ. 170, թ. 130։

16 «Кавказский календарь на 1868 г.», стр. 410.

17 «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. 4, ч. 2. Тифлис, 1888, стр. 255.

18 Նույն տեղում, հ. 5, մաս 2, էջ 62։

19 «Сборник сведений о Кавказе», т. 2, Тифлис, 1872, стр. 185.

ական թվականներին բոժոժի արտադրանքը նորից սկսեց աճել և արտահանվել[20]։ Մետաքսագործության հիմնական կենտրոն մնում էր Նախիջևանի գավառը, որտեղ XIX դ. վերջին տարիներին ստացված բոժոժը հասնում էր հետևյալ չափերի. 1893 թ.՝ 2100 փութ, 1894 թ.՝ 2500, 1895 թ.՝ 2559, 1896 թ.՝ 3000, 1897 թ.՝ 2550, 1898 թ.՝ 3190, 1899 թ.՝ 3600, 1900 թ.՝ 5400 փութ[21]։

Ինչպես տեսնում ենք, չնայած որոշ տատանումներին, մետաքսի հումքի արտադրությունը տարեցտարի աճել է։

XIX դ. 80-ական թվականներին մետաքսագործությունը տիպիկ ապրանքային արտադրություն էր։ Այսպես, Օրդուբադի շրջանը տարեկան մոտավորապես տալիս էր 15000 ռ. մետաքս, որից միայն 2000 ռ. էր օգտագործվում տեղական կարիքների համար, իսկ մնացածն ագուլիսցի վաճառականների միջոցով արտահանվում էր[22]։

Մետաքսի մշակման հիմնական ձևն էր բոժոժից թել քաշելը։ Շերամապահությունը ձեռնտու զբաղմունք էր և չէր պահանջում մեծ հողատարածություններ ու դրամական միջոցներ։ Անհամեմատ դժվար էր մետաքսի հումքի մշակումը։ Բոժոժից բամբակի և մետաքսաթելի ստացումը կատարվում էր տեղի պարզունակ, արհեստանոցի նմանվող փոքրիկ գործատներում, որտեղ իշխում էր մարդու ֆիզիկական ուժի միջոցով շարժման մեջ դրվող հետամնաց տեխնիկան։ Այսպես, օրինակ, Երևանի նահանգում մետաքսը փաթաթում էին մանջուլիկ կոչվող սարքի վրա։ Այս եղանակով ստացված մետաքսաթելն անորակ էր և մեկ փութը արժեր 40—120 ռ.[23], նայած պահանջարկին ու շուկայական գներին։

Արևելյան Հայաստանի մետաքսագործական շրջաններում գործում էին նաև շրջիկ տնայնագործ-արհեստավորներ, որոնք մեծ մասամբ վարձատրվում էին բնամթերքով՝ ստացված մետաքսաթելի $^1/_5$-ի չափով[24]։

Հիշյալ գործարան-արհեստանոցները և շրջիկ մետաքսագործ վարպետների գործունեությունը տիպիկ տնայնագործական մանր ապրանքային արտադրության բնույթ ունեին։ Այդպիսի «գործարանների» թիվը Նախիջևանի գավառում յոթն էր. երկուսը՝ Օրդուբադում, չորսը՝ Զանանաբ գյուղում և մեկը՝ Ագուլիսում։ Այդ գործարաններում տարեկան արտադրվում էր 152 փութ մետաքսաթել և 161 փութ բամբակ, իսկ համախառն եկամուտը 33620 ռ. էր[25]։ Նույնատիպ «գործարաններ» կային նաև Հայաստանի այլ վայրերում։ «Խիստն ասած,— գրում է Ս. Զելինսկին,— ֆաբրիկա-գործարանային արտադրություն գոյություն չունի, այլ կա դրա նման մի բան, որն ընդհանուր ոչինչ չունի ներկա ժամանակի հասկացությամբ ֆաբրիկաների ու գործարանների հետ, քանի որ եղած, այսպես կոչված, «գործարանները» չունեն կարգավորված շենքեր,

---

20 «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. 4, стр. 171.

21 «Памятная книжка на 1904 г. Эриванской губернии», ч. 3, стр. 22.

22 «Сборник сведений о Закавказье», т. VII, Тифлис, 1880, ч. 3, стр. 232.

23 «Кавказская шелководческая станция», вып. 3, т. 12, Тифлис, 1902, стр. 11.

24 М. К. Рожкова, Экономическая политика царского правительства на Среднем Востоке во второй четверти XIX в. и русская буржуазия, М., 1949, стр. 126.

25 «Памятная книжка на 1904 г. Эриванской губернии», ч. 3, стр. 23.

դործիքներ, մշակման առաջավոր եղանակներ և չեն համապատասխանում իրենց կոչմանը»[26]։

Նման եղանակով արտադրվող մետաքսաթելը, պարզ է, չէր կարող բավարարել ռուս ֆաբրիկատերերի հարաճուն պահանջները։ Ինչպես վկայում է ժամանակի մամուլը «մեր շերամապահությունը և մետաքսի մշակումը չնայելով հաջող պայմաններին, շատ գանդաղ քայլերով է առաջ ընթանում։ Մեր մետաքսը իբրև մշակված և վերջնական վաճառականության նյութ դեռ շատ պակասություններ ունի»[27]։ Իր այս թերություններով, բնական է, այն չէր կարող մրցել Իտալիայից և Ֆրանսիայից ներմուծվող որակյալ ֆաբրիկա-դործարանային արտադրանքի հետ։ Ռուսաստանում արդյունաբերության զարդացումը և տեխնիկական առաջադիմությունն էլ ավելի էին սրում հումքի ստացման հարցը։ Գ. Վարդանյանի վկայությամբ «Վերջին 10—15 տարում Ռուսիայում երևան եկան մետաքսագործական գործարաններ, որոնք անընդհատ դիմում են Անդրկովկասին հում նյութով իրենց պահանջները լրացնելու՝ թե՛ բոժոժով և թե՛ մանած թելով»[28]։

Ռուս գործարանատերերը փնտրում էին արտադրությունը հումքով ապահովելու միջոցներ. սի կողմից կիսաֆաբրիկատների՝ մետաքսաթելի ավելի շատ ներմուծման ուղիներ, մյուս կողմից՝ ձգտում էին իրենց ֆաբրիկաներում կազմակերպել մետաքսաթելի մեքենայացված արտադրություն, որպեսզի գործեն անկախ ու անկաշկանդ և դա նրանց մասամբ հաջողվեց։ Մետաքսաթելի փոխարեն սկսեցին դնել չմշակված մետաքս՝ բոժոժ։

Նոր ժամանակների պահանջներին համապատասխան Անդրկովկասում, այդ թվում Արևելյան Հայաստանի մետաքսագործական շրջաններում սկսում են կառուցվել եվրոպական արտադրության նոր դազգահներով ու սարքերով մետաքսաթելի ստացման գործարաններ։ Այսպիսիք Օրդուբադում և Նախիջևանի գյուղերում, հատկապես Ագուլիսում ստեղծվեցին 1870—80-ական թվականներին։ Դրանց առկայությունը սկսեց խիստ նեղել տնայնագործական եղանակով մետաքսաթել արտադրող փոքրիկ «գործարաններին», որոնք չդիմանալով անհավասար մրցակցությանը, մեկը մյուսի հետևից քայքայվում էին։ Այսպես, եթե 1896 թ. այդպիսի գործարանների թիվը հասնում էր 26-ի[29], ապա 1902 թ.՝ 14-ի[30]։ Ինչպես նկատվել է. «եթե անցյալ դարի 80-ական թվականներին այս կամ այն չափով նշանավոր մետաքսագործական շրջաններում գոյություն ունեին մեծ քանակությամբ տնայնագործ մետաքսաթել փաթաթողներ, որտեղ տերերը բանվորների օգնությամբ աշխատեցնում էին 2-ից մինչև 10 մանջուլիկ կոչվող դազգահներ, ապա այժմ այդպիսիները պահպանվում են միայն հեռավոր, խուլ վայրերում և այն էլ բացառության կարգով»[31]։ Երբեմնի տնայնագործ-մետաքսագործները չդիմանալով մրցակցությանը, դադարում էին մետաքսաթել արտադրելուց, քանի որ, եթե նրանց

26 «Сборник сведений о Кавказе», т. 7, ч. 3, стр. 233.

27 «Արաքս», գիրք Ա, 1885, էջ 13։

28 «Մուրճ», 1891, № 14, էջ 425։

29 «Кавказский календарь на 1898 г.», Тифлис, 1897, стр. 80.

30 «Памятная книжка на 1904 г. Эриванской губернии», ч. 2, стр. 92.

31 «Кавказская шелководческая станция», вып. 3, т. 12, стр. 12.

արտադրանքի մեկ փութը, ինչպես վերևում նշվեց, հազիվ արժեր 40—120 ռ., ապա տեղական ֆաբրիկա-գործարանային արտադրության մեկ փութն արժեր 350—500 ռ.[32]։ Այսպիսի անհավասար մրցակցության պայմաններում, գնալով պակասում էր տնայնագործ մետաքսագործի մաքուր եկամուտը։ Այսպես, եթե 1860-ական թվականներին, ինչպես արդեն տեսանք, մետաքսագործությունից նրա ստացած տարեկան եկամուտը կազմում էր 180—240 ռ., ապա 1880—90-ական թվականներին՝ 56 ռ.[33]։ Շերամապահ-տնայնագործն աստիճանաբար իր տեղը զիջում էր եվրոպական տիպի ֆաբրիկաներին ու գործարաններին։ Դարավերջին գրանցում էր կենտրոնացվել մետաքսաթելի գրեթե ամբողջ արտադրությունը։ Այսպես, Օրդուբադում գործող Բաբայանի գործարանն ուներ Ֆրանսիայից բերված շոգեշարժ մեքենաներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ 6 ձիաուժ կարողություն։ Գործարանը բաժանված էր երեք արտադրամասի, որոնցից յուրաքանչյուրում աշխատում էր 90 բանվոր (ամեն մեկի տարեկան աշխատավարձը կազմում էր 130 ռ.)։ Արտադրվում էր երեք տեսակի մետաքսաթել, որը վաճառվում էր Մոսկվայի և այլ քաղաքների ֆաբրիկատերերին[34]։ Շերամապահ-մետաքսագործները ստիպված էին զբաղվել մեծ մասամբ միայն շերամի որդի խնամքով և բոժոժի ստացումով, որի մի մասն արտահանում էին, իսկ մյուս մասը՝ վաճառում տեղի գործարանատերերին։

Մետաքսի ֆաբրիկա-գործարանային արտադրությունը XIX դ. վերջում մեծ տեղ էր գրավում նաև Ղարաբաղի տնտեսական կյանքում։ Գործարաններ կային ինչպես Շուշիում, այնպես էլ գյուղերում, որտեղ մեծ մասամբ կիրառվում էր կանանց աշխատանքը։ Ինչպես վկայում է Ա. Արասխանյանը, «Մետաքսի արտադրության լայն զարգացումը Ղարաբաղում մասամբ կարելի է բացատրել արտադրության այդ ճյուղում կանացի աշխատանքի կիրառումով, քանի որ կանացի աշխատանքը ավելի էժան էր»[35]։ 1886 թ. Շուշիում մետաքսագործ բանվորուհու օրական աշխատավարձը կազմում էր 15—30 կ.[36]։

1880—1890-ական թվականներից սկսած Ղարաբաղում տնային մանր արտադրողներն արդեն շատ աննշան թիվ էին կազմում, քանի որ մետաքսի արտադրությունը գրեթե ամբողջապես կենտրոնացած էր խոշոր գործարանատերերի ձեռքում։ Շուշիի գավառում այդպիսիների թիվը հասնում էր 13-ի, որից 6-ը գործում էր քաղաքում, իսկ 7-ը՝ գյուղերում (Քուրքաջան, Դաշալդի, Բալաջա, Չանախչի կամ Ավետարանոց գյուղ, Գիշ և այլն)։ Այդ գործարաններն ունեին 674 դազգահ, որոնք տարեկան արտադրում էին 1400 փութ մետաքսաթել՝ 38500 ռ. արժողությամբ։ Իսկ Օրդուբադի գավառում գործում էին 4 այդպիսի կատարելագործված գործարաններ, որոնք ունեին 118 դազգահ և տարեկան արտադրում էին 300 փութ մետաքսաթել[37]։ Սակայն այդ գործա-

---

32 «Сборник сведений о Кавказе», т. 2, Тифлис, 1872, стр. 187.

33 «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. 4, ч. 2, стр. 255.

34 «Մշակ», 1878, № 125։

35 А. Н. Арасханян, Закавказские шелкомотальные заводы, Тифлис, 1888, стр. 48.

36 Նույն տեղում, էջ 49։

37 Նույն տեղում։

բանները հումքի անբավարարության պատճառով, աշխատում էին տարեկան 3—4 ամիս, որը թուլացնում էր գործարանների միջև եղած մրցակցությունը՝ խանգարելով նրանց հետագա կատարելագործմանը։

Այսպիսով, մետաքսաթելի ֆաբրիկա-գործարանային արտադրության զարգացման հետևանքով, ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանում XIX դ. վերջերին, մետաքսի արտադրության տնայնագործական եղանակը չդիմանալով մրցակցությանը, աստիճանաբար անկում էր ապրում։

ПРОИЗВОДСТВО ШЕЛКА В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

Г. Р. АРАКЕЛЯН

Резюме

В 40—50-ых гг. XIX в. в Восточной Армении обработка сырья шелка (коконов) производилась кустарным способом. В это время обработка сырья шелка еще не отделилась от шелководства, и подавляющее большинство предприятий представляло собой мелкие мастерские, в которых преобладал ручной труд. В конце XIX в. вследствие экономического развития возникает также заводское производство. Паровые двигатели и усовершенствованные станки доставлялись из-за границы. Несмотря на это, а также на наличие дешевой рабочей силы, шелковое производство не могло подняться на уровень настоящего капиталистического заводского производства из-за недостатка сырья.

Шелковая пряжа, производимая на этих полузаводах, в основном вывозилась в промышленный центр России. Восточная Армения, как и все Закавказье, была сырьевой базой России. В связи с этим потребность в шелковой пряже росла и как следствие этого — производство совершенствовалось, вытесняя кустарные методы.